Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ՝ սիրելի շրջանավարտներ, դպրոցական շրջանի ավարտման առիթով:

Ուսումնառության տարիներին բարեջան ձեր ուսուցիչներից դուք ստացաք գիտելիքներ՝ քայլելով իմացության արահետներով: Այսօր դուք կյանքի նոր հանգրվանի սեմին եք, և ձեզ հետ են կապված հույսերը ձեր ծնողների, մեր ժողովրդի, մեր հայրենիքի:

Անշե՛ջ պահեք ձեզ փոխանցված գիտության լույսը և ավելի զորացրե՛ք ձեր գիտելիքները կրթության նոր ասպարեզներում մնայուն ձեռքբերումներով և համամարդկային ու ազգային արժեքների առավել ճանաչողությամբ:

Աղոթում ենք առ Ամենակարողն Աստված, որ պահի ու պահպանի Ձեզ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո և պարգևի երջանկություն, երկնառաք հաջողություններ, որպեսզի հաստատուն ու նախաձեռնող ոգով ընթանաք կյանքի ճանապարհով՝ միշտ հավատարիմ մնալով մեր Մայր Հայրենիքին և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
24 մայիսի 2008 թ.